Տիկին, պարոն,

Այսօր դուք գտնվում եք ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակում (OFII), որպեսզի ստորագրեք ձեր՝ հանրապետական ինտեգրացման պայմանագիրը (CIR):

Այսպիսով, դուք ցանկություն եք հայտնում երկարատև բնակություն հաստատել Ֆրանսիայում, ձեզ հյուրընկալող երկրում և պարտավորվում եք անհատական ինտեգրացման ճանապարհ անցնել:

Այս պայմանագրի շրջանակներում, դուք կարող եք օգտվել իրավունքներից, բայց դուք նաև պետք է հարգեք կանոնները և ենթարկվեք պարտադիր կանոններին:

## Պարտավորվածությունը հանրապետական ինտեգրացման անհատական դասընթացի ժամանակ

Այսօրվա անհատական հարցազրույցի նպատակն է գնահատել ձեր կարիքները, ձեզ ուսուցողական դասընթացների գրանցել և ձեզ ուղղորդել՝ ըստ ձեր անհատական իրավիճակի:

- քաղաքացիական ուսուցում

Ձեր դասընթացը սկսվում է պարտադիր քաղաքացիական ուսուցումից, որի տևողությունը երկու օր է:

- Լեզվի ուսուցում

Եթե ձեր լեզվի իմացության մակարդակը ըստ լեզուների համար վկայակոչման ընդհանուր եվրոպական շրջանակի (CECRL) A1 մակարդակից ցածր է, դուք պետք է լեզվի ուսուցում ստանաք, որպեսզի բարձրացնեք լեզվի իմացությունը դեպի այդ մակարդակը:

Դուք այսպիսով կունենաք ֆրանսերեն լեզվի իմացություն, որը ձեզ թույլ կտա առօրյա կյանքում կարողանալ հաղորդակցվել :

- Տեղեկություններ

Դուք կարող եք նաև տեղեկություններ ստանալ ձեր իրավունքների մասին և պետական ծառայությունների մասին, որոնցից դուք կարող եք օգտվել (դպրոցներ, հիվանդանոցներ, սոցիալական ապահովագրություն...):

## Հանրապետական ինտեգրացման պայմանագրի (CIR) կանոնների պահպանումը ձեր՝ բազմամյա բնակության քարտի տրման պայմանը

Ստորագրելով Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը (CIR), դուք պարտավորվում եք ջանասիրաբար և լրջորեն հաճախել քաղաքացիական ուսուցման դասընթացներին և լեզվաբանական դասընթացներին, որոնք առաջարկվել են ձեզ:

Դուք նաև պետք է հարգեք Ֆրանսիայի Հանրապետության և ֆրանսիական հասարակության գլխավոր արժեքները:

Եթե դուք հարգեք այդ պայմանները, ձեզ կտրվի բազմամյա բնակության քարտ:

## Ուսուցման շարունակությունը և բնակության տաս տարվաքարտի տրամադրումը

Դուք կարող եք շարունակել ձեր՝ հանրապետական ինտեգրացման անհատական ճանապարհը ֆրանսերեն լեզվի խորացված ուսուցմամբ:

Եթե ցանկանում եք ստանալ տաս տարվա բնակության քարտ, դուք պետք է հանձնեք լեզուների համար վկայակոչման ընդհանուր եվրոպական շրջանակի (CECRL) A2 լեզվի մակարդակը :

Դուք նաև պետք է արդյունավետ կերպով հարգեք Ֆրանսիայի Հանրապետության սկզբունքները:

Եթե այդպես հարգեք հանրապետական ինտեգրացման պայմանագիրը, ապա ձեզ կտրամադրվի բնակության տաս

տարվաքարտ:

**Ֆրանսիական սահմանադրության 1958 թվականի հոկտեմբերի 4-ի համար 1 հոդվածը**

**"Ֆրանսիան անբաժանելի, աշխարհիկ, դեմոկրատական և սոցիալական հանրապետություն է: Նա ապահովում է բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև՝ առանց ծագման, ռասայի, կամ կրոնի խտրականության: Նա հարգում է բոլոր կրոնները: Այն կազմակերպված է ապակենտրոնացված ձևով:**

**Օրենքը նպաստում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ ունենալուն ընտրական մանդատներին և ընտրողական պաշտոններին, ինչպես նաև մասնագիտական և սոցիալական պատասխանատվություններին":**

## Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը

Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը, որը սահմանված է ապաստարանի իրավունքի և օտարերկրացիների բնակության և մուտքի վերաբերյալ օրենսգրքի L.311-9 հոդվածով, կնքվում է ձեր և Ֆրանսիայի պետության միջև, որի ներկայացուցիչն է հանդիսանում պրեֆեն: Պայմանագիրը հիմնված է փոխադարձ պարտավորությունների վրա:

## 1. Պետության պարտավորությունները

Պետությունը կազմակերպում է ընդունելություն, որպեսզի նպաստի ձեր ինտեգրացմանը: Այն իր մեջ ներառում է հետևյալ ծառայությունները.

- անհատական հարցազրույց ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակի (OFII) աշխատակցի հետ, ինչը թույլ է տալիս գնահատել ձեր կարիքները, ձեզ առաջարկել ուսուցողական դասընթացներ և ձեզ ուղղորդել՝ ըստ ձեր անհատական իրավիճակի;
- քաղաքացիական ուսուցում, որը բաղկացած է երկու մոդուլներից.
- Ֆրանսիայի Հանրապետության սկզբունքները և արժեքները
- ա

պրել և աշխատանք ունենալ Ֆրանսիայում

- ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակում (OFII) անցկացված լեզվի իմացության թեստ՝ որոշելու ձեր ֆրանսերենի իմացության մակարդակը;
- եթե անհրաժեշտ լինի, առաջարկվում է լեզվի դասընթաց, որի կարիքները և տևողությունը որոշվում են լեզուների համար վկայակոչման ընդհանուր եվրոպական շրջանակի (CECRL) A1 լեզվի մակարդակի ռեֆերանսի հիման վրա:

## II-Ձեր պարտականությունները

Դուք պարտավորվում եք.

- հարգել Ֆրանսիայի Հանրապետությունը և ֆրանսիական հասարակության հիմնական արժեքները
- մասնակցել ջանասիրաբար և լրջորեն քաղաքացիական ուսուցման երկու մոդուլներին և լեզվի դասընթացներին
- իրականացնել ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակում (OFII) հարցազրույցի ընթացքում նշված գործողությունները
- նամակով ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակին (OFII) տեղյակ պահել ձեր իրավիճակի մասին ցանկացած փոփոխության:

## III- Պայմանագրի տևողությունը

Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը (CIR) կնքվում է մեկ տարի ժամանակով: Այն կարող է բացառիկ կերպով երկարեցվել պրեֆեի կողմից, լեգիտիմ պատճառներով, ամենաշատը մեկ տարի լրացուցիչ ժամանակով:

Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը (CIR) կարող է նաև մերժվել պրեֆեի կողմից, ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակի (OFII) առաջարկությամբ, եթե դուք չեք հարգում ջանասիրության և լրջության պայմանները և եթե դուք ցուցաբերել եք անհարգալից վերաբերմունք Ֆրանսիայի Հանրապետության և ֆրանսիական հասարակության հիմնական արժեքների նկատմամբ:

## Ձեր անհատական ընտրությունը

Այսօր անցկացված հարցազրույցից հետո, հետևյալ ուսուցողական դասընթացներն են ամրագրված.

**Քաղաքացիական ուսուցում "Ֆրանսիայի Հանրապետության սկզբունքները և արժեքները"**

□ Պարտադիր ուսուցում

**Քաղաքացիական ուսուցում**

«**Ապրել և ունենալ աշխատանք Ֆրանսիայում**»

□ Պարտադիր ուսուցում

- **Լեզվի ուսուցում**

□ Եթե ունեք լեզվի իմացության A1 մակարդակ (ազատվում եք լեզվի դասընթացից)

□ Եթե չունեք լեզվի իմացության A1 մակարդակ (նշանակվում է ...ժամ լեզվի դասընթաց)

Բացի այդ, ձեզ ներկայացնում ենք հետևյալ ծառայությունների առաջարկությունը.

Հանրապետական ինտեգրացման պայմանագիրը (CIR) Ֆրանսիայում ձեր ինտեգրացման ճանապարհի առաջին փուլն է: Դուք պետք է հարգեք վերջինիս իրավունքները և պարտականությունները:

Այն ձեզ հյուրընկալող երկրում ձեր հաջողված ինտեգրացման երաշխիքն է հանդիսանում:

**Հանրապետական ինտեգրացման պայմանագիր** N°

Կնքված է ... /ամսաթիվ/

Պարոն/Տիկին... միջև (անչափահասների համար նշել օրինական ներկայացուցչի անունը, ազգանունը)

N° d'AGDREF (Ֆրանսիայում օտարերկրյա քաղաքացիների գործերի կառավարման ծրագիր)

/Ստորագրություն/

Եվ դեպարտամենտի պրեֆեկտի միջև / /

Պայմանագրի երկարեցման դեպքում (տևողությունը, վերջնաժամկետը, պատճառը)

*1978 թվականի հունվարի 6-ի N°78-17 օրենքը ինֆորմատիկայի, փաստաթղթերի և ազատության մասին, կիրառվում է այս պայմանագրի շրջանակում:*

*Այն երաշխավորում է իրավունք ունենալ ծանոթանալ ձեր մասին տեղեկություններին և, հարկ եղած դեպքում, ուղղել դրանք Ներգաղթի և ինտեգրացման ֆրանսիական գրասենյակում (OFII):*